BERLIN — Houshamadyan project presents a film entitled "Hadjitsik Tum Agho En: Local Dialect and Customs", with concept and editing by Silvina Der Meguerditchian.

The film was scheduled to be released two weeks ago. But Houshamadyan team was forced to adapt to the circumstances created by the global pandemic. At the time, Silvina Der Meguerditchian was in Buenos Aires, visiting relatives, and her flight back to Berlin was canceled. It was only a week ago that she was finally able to fly back home and rejoin her family.

She immediately resumed work on the film and finalized it for release.

The film is about 11 minutes long, and it is dedicated to the dialect and customs of Hadjin Armenians. It features material collected from throughout the world, including testimonies by people now living in Argentina and Lebanon, as well as photographs sent to use from Lebanon, the United States, Argentina, and France. It also features music obtained from New Jersey, Buenos Aires, and Berlin.

The common thread is Hadjin –

its dialect, its traditions, and local customs.

Hadjin was a city with more than 20,000 Armenian residents, located north of historic Cilicia. In 1920, it was completely emptied of its Armenian population.

Many eventually found refuge in Lebanon in late 1921. Like thousands of other Armenian refugees, they settled down in the refugee camp of Beirut.

Others made their way further ashore, to places like Greece, Argentina, the United States, and Soviet Armenia.

In Lebanon, beginning in 1930, refugees from Hadjin built the New Hadjin neighborhood on the periphery of Beirut. It became the principal resettlement site for Hadjin natives.

Living together in this fashion allowed many of Hadjin's traditions, as well as the local dialect, the Hedjno lizou, to be preserved in the diaspora, especially in Beirut and Buenos Aires.

Link to video:

<https://www.houshamadyan.org/mapottomanempire/vilayet-of-adana/hadjin/local-characteristics/language-and-dialect.html>

Armenian Educational Benevolent Union

Continued from page 1

ipients and trauma victims. "The short amount of time it takes to donate can mean a lifetime to a patient with a serious medical condition. We urge eligible donors to join us in the selfless act of giving blood."

On its website, the American Red Cross states that this is the time to take care of one another, and is calling on all those who are healthy and are feeling well to donate blood. They also address the public's concern say-

ing that there is no evidence and there are no reported cases of the coronavirus – or any respiratory virus – being transmitted by a blood transfusion. In addition, the Red Cross assured all potential donors that it has implemented additional precautionary measures out of an abundance of caution.

To schedule your appointment, please visit www.redcrossblood.org and enter sponsor code AEBU. For more information, you may call us at (626) 344-7321.

Armenian Engineers Working to Design

Continued from page 3

ing Association of Armenia noted that they are currently working on designing artificial respiration devices, developing their complete or partial production, and will submit concrete proposals to the Ministry of High Technological Industry. At the same time, it

was noted that specialists successfully restore devices that were previously in storage.

Prime Minister Pashinyan praised the work of Armenian engineers in the above-mentioned directions and noted that the government, in its turn, is ready to support the effective implementation of the programs.

Արդիական Բռնակալը



ՍՕՍԻ ԳԱՇԵԱՆ

Մեր տան պատշգամբ նստած հետաքրքրական վեպ մը կը կարդամ: Աշնան բուրմունքը զգալի է օդին մէջ:

Զարմանալի կատարեալ լուսթիւն է ամէն կողմ. երբ, առաջ միայն կիրակի կամ տօնական օրերուն կ'արժանանայինք այս լուսթեան: Փողոցէն հագիւ հատուկեմտ ինքնաշարժներ կ'անցնին, կամ ուտելիքի ապսպրանք տանող տղաք իրենց հեծանիւներով. նաեւ միքանի պարապ հանրաշարժներ: Անցորդներուն թիւը նուազագոյնի իջած է. տեղ-տեղ, հանրախանութներու, դեղարաններու առջեւ, մարդիկ հերթի կը սպասեն, իրարու միջեւ բաւական միջոց ձգելով: Բոլոր դպրոցները, եկեղեցիները, վաճառատունները, զբօսավայրերը, հանրային հաւաքավայրերը փակ են:

Քաղաքը տարօրինակ երեւոյթ մը ստացած է, ո'չ միայն մեր մայրաքաղաքը, այլ բոլոր քաղաքներն ու գիւղերը. ո'չ միայն մեր երկիրը, այլ 160-է աւելի երկիրներ բոլոր ցամաքամասերուն մէջ, ընդգրկելով անխոցելի կարծուած գերպատու թիւներ, զարգացած, հարուստ երկիրներ եւ անշուշտ՝ խեղճ ու կրակ՝ աղքատներ:

Այսօր՝ ամբողջ աշխարհ ենթարկուած է միահեծան, անգութ բռնակալի մը քմահաճոյքին, «Քորոնա վիրուս» կոչուած թագակիր ժահրին, որ առաջին անգամ Չինաստանի մէջ իր յայտնուէլէն ի վեր՝ իսլաւ է հազարաւոր կեանքեր եւ կը շարունակէ խլել, հակառակ իր դէմ տարուող ահաւոր պայքարին բժիշկներու եւ գիտնականներու կողմէ, կատեցնելու համար իր մահաբոյր յառաջխաղացքը:

Ըստ երեւոյթին՝ ամենէն արդիւնաւէտ եւ պարզ միջոցը կանխարգելու համար անոր շրջագայումը, տունը մնալն է: Եւ բոլոր կառավարութիւնները կը հրահանգեն դուրս չելլել, բացի անհրաժեշտ պարագաներէ:

Օրական քանչորս ժամ՝ տարբեր երկիրներու հեռատեսիլներու կայաններ, ձայնասփիւռ, մամուլ, ընկերային ցանցեր կը խօսին միայն մէկ նիւթի շուրջ՝ համաճարակը:

Մարդիկ արգելափակուած իրենց տուններուն մէջ, դարձան ինքնակամ կայանաւորներ:

Փոքր տարիքի զաւակ ունեցող ծնողներ մատնուած են անել կացութեան: Չեն գիտեր ինչպէս գոհացնել իրենց երեխաները, որպէսզի չզգուրին: Ողջ մնան բջիջային հեռախօսները, համակարգիչը, հեռատեսիլը, հիմա վերականգնացաւ

նաեւ մեր օրերու, գլուխ կտորոցեր եւ նմանաձեւ սեղանի խողեր:

Եւ անշուշտ՝ անօթութիւնն ու ձանձրոյթը փարատող անբացակայելի հրաշք դեղը, ուտել:

Ուտել ոչ միայն, երբ անօթի ենք, այլ երբ ձանձրացած, հեռատեսիլ դիտելու, կամ կարդալու ատեն, եւ կամ չեմ գիտեր...

Մամաները համով կերակուրներ կ'եփեն, նոր խոհազոյցեր կը փորձեն, եւ կամ ամենապարզ, հեռախօսին ընկալուչը կը վերցնեն եւ կ'ապսպրեն իրենց սիրած ուտելիքը, կամ անուշեղէնը:

Ձոյգերը եւս ամբողջ օրը միասին անցընելով յաճախ կը զուարճանան, գիրար կը վայելեն եւ կամ... կը յոգնին: Երբեմն՝ գորգին տակ պահուած հին սրտնեղութիւններ, աւելորդ խօսքեր, մոռցուած ոխեր յարութիւն կ'առնեն եւ անտեղի եւ անհեթեթ վէճերու դուռ կը բանան:

Ուսուցիչներ այս նոր պայմաններու բերումով՝ ստիպուած են իրենց աշակերտներուն ելեքտրոնիկ դասեր, պարտականութիւններ դրկել, զանոնք սրբագրել վերստին ուղարկել, ուրիշ տաղտուկ մը:

Համացանցը, Wi-Fi ծանրաբեռնուած են միլիոնաւոր մարդոց անխնայ գործածութեամբ. Եւ եթէ յանկարծ՝ օր մը դադրի այս հրաշքը եւ մեզ գրկէ իր բարիքներէն, ինչպ'ս պիտի կարենանք գոյատեւել:

Ամէն տարիքի, տղամարդ թէ կին, երիտասարդ, պատանի, իրարու պատգամներ կ'ուղարկեն, տեսաերիզներ, կատակներ, սրամտութիւններ եւ անշուշտ կրօնական յորդորներ, գուշակութիւններ, Սուրբ Գիրքէն մէջբերումներ, բժշկական խորհուրդներ, հիւանդութեան ախտանշաններ, նոր պատուաստներու գիտեր եւ դեռ ինչէ՞ր: Ժամանակը այնքան առատ է, որ պէտք է սպառել:

Այս բոլորը տանելի են, երբ տան մէջ մէկէ աւելի բնակիչ կայ:

Հապա՝ անոնք, որ մինակ կ'ապրին, եւ յատկապէս անոնք, որոնք որոշ տարիք մը վեր են եւ աւելի ենթակայ վարակուելու եւ ոչ ոք ունին:

Մէկ շաբաթէն աւելի է, որ բոլորս դատապարտուած ենք տունը մնալու եւ տակաւին մի քանի շաբաթ եւս պիտի հանդուրժենք:

Այս առտու, վերի յարկի դրացուհիս վարանումով մեր դուռը զարկաւ, իբր պատրուակ ինձմէ նախորդ օրուան թերթը ուզելով. դէմքը տխուր արտայայտութիւ մը ունէր: Անմիջապէս գինքներս հրաւիրեցի, կարծես ատոր կը սպասէր, ուրախացաւ: Առաջին ան-

գամն էր, որ մեր տունը կու գար. սուրճ եփեցի եւ սկսանք խմել միասին. դէմքը պայծառացաւ: Պէտքը կը զգար, մէկուն հետ ըլլալու, դէմ-դիմաց նստելու, խօսելու եւ լսելու: Մէկ ժամ յետոյ զնաց եւ թերթը մոռցաւ տանելու: Վստահ եմ, որ թերթին պէտք չունէր, այլ մարդու հետ խօսելու պահանջը կը զգար:

Այս հաղորդակցութեան միջոցներու առատութեան մէջ, մարդիկ մինակութենէ կը տառապին: Անցեալ օր ապշեցայ, երբ կարդացի, որ ձափոնի եւ Անգլիոյ մէջ տարիքոտ մարդիկ, երբեմն պզտիկ չարագործութիւններ կ'ընեն, օրինակ հանրախանութին մէջ ուտելիքներ գողնալ, որպէսզի գիրենք ձերբակալեն եւ բանտ տանին եւ հոն խօսակից ունենան: Անշուշտ ասոնք ծայրայեղ պարագաներ են. բայց երեւակայեցէք, թէ ու՞ր հասեր է մինակութեան գործած աւերը: Ի զուր տեղը չէ, որ Անգլիա ստեղծեց «Մինակութեան նախարարութիւն»՝ նկատի առնելով քսանմէկերորդ դարու ընկերային ահաւոր ախտին տարողութիւնը:

Յաճախ՝ գիշերները անկողնիս մէջ մտիկ կ'ընեմ ձայնասփիւռի որոշ կայաններ, ուր խօսակցներուն հետ, մինակ եղող եւ մինակութենէ փախչող մարդիկ, ընդհանրապէս կինք, խօսակից կը փնտռեն: Եւ խօսնակը մտիկ կ'ընէ համբերութեամբ, թելադրանքներ կ'ընէ, կամ կը կատակէ եւ ենթական գոհ եւ բաւարարուած՝ շնորհակալութիւն կը յայտնէ: Այս երեւոյթը շատ ընդհանրացած է մասնաւոր Արեւմուտքի մէջ:

Շուէտի մէջ կը գովաբանեն եւ կը քաջալերեն անկախանալը, որպէսզի ոչ մէկը միւսէն կախում չունենայ, ո'չ պատանին ծնողքէն, ո'չ ալ ծերերցած ծնողքը զաւակին բեռ ըլլալու վախը սպրի: Եւ այս բոլորին հետեւանք կ'ըլլայ՝ հիւանդագին մինակութիւնը, որ յաճախ ողբերգական վախճան կ'ունենայ:

Ներկայիս՝ այս համաշխարհային համաճարակը՝ միացած մի-

նակութեան, կրկնակիօրէն տառապալից կը դարձնէ ապրիլը:

Այսօր բազմաթիւ երկիրներ միասնաբար կը դիմադրեն զօրաւոր եւ սպառնացող թշնամիի մը, որ կը յառաջանայ անձայն եւ անշուշտ, իր տիրապետութեան սահմանները ընդարձակելով. փոքրիկ աննշան, վիրուսներ թագը գլխուն, առայժմ անխորտակելի է եւ տրամադրութիւն չունի անհետանալու:

Կանխագուշակութեան համար, սահմանները գոցուած են բոլոր երկիրներուն միջեւ, նոյնիսկ նոյն երկրի տարբեր նահանգներուն մէջ: Հազարաւոր ճամբորդներ չեն կրնար տուն վերադառնալ:

Ու՞ր մնաց համաշխարհայնացումը:

Կարծես բնութիւնն ալ Քորոնա վիրուսին դաշնակից եղած է: Ան ալ իր բողբոխ ձայնը բարձրացուցած է, ի տես ազա՛ մարդուն, որ սովալլուկ զայլի նման կը յօշոտէ, կը շահագործէ բնութեան տուած անթիւ բարիքները: Ծարտարար ու լեռնաբեր գարգացման հետեւանքով, կլիմային անհամեմատ ջերմացումը կը սպառնայ կարգ մը կենդանիներու գոյութեան, բնապահպանումի համար եղած կոչերը խուլ ականջներու համար են միայն:

Հիմա լսելի է քաղաքին մէջ ծառերուն վրայ թառող ճնճողակներուն ճոռոռոցները. օդը գերծ է ապականութենէ: Մարդոց բացակայութիւնը պատճառ եղաւ, որ դրացի քաղաքին մէջ, մի քանի վայրի կենդանիներ իրենց որջերէն դուրս ելլեն: Վենետիկի գետին ջուրերը աւելի գուլալ կը հոսին եւ բազեր, սագեր սկսան անվախօրէն լողալ. ձուկերը կը յանդգնին մինչեւ ծովափ գալ: Բնութեան անմիջական եւ դրական հակազդեցութիւնը որքան զգալի է:

Լուսթիւնը, թէեւ տարօրինակ կը թուի քաղաքի մարդուն, բայց անոր կարիքը շատ կը զգայինք: Մտողներ յաճախ կը տրտնջային, որ բաւարար ժամանակ չունին

Շար. ը էջ 15

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the
2020 AEBU Scholarship Program
Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

APPLY NOW
Through June 30, 2020

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104



Հարցազրույց Գոյների Ծարտարապետ՝ Գեղանկարիչ Էդման Այվազեանի հետ

ԱՍՏՏՈՒՐ ԿԻՒՋԵԼԵԱՆ

(Շարունակում Ծախտորի թիւին)

Ա.Կ. Նախքան քո իտալիա գնալու մասին խօսելը, ուզում եմ որ պատմես Թեհրանի Մշակույթ Միության մասին, որը՝ ինչպես ինքդ նշեցիր մի առիթով, կարեւոր դեր է խաղացել քո պատանեկան եւ երիտասարդական կեանքում:

Է.Ա. Դեռ այն տարիներին, երբ իմ դասագրքի նկարներն էի փոխում, մասնակցել եմ Մշակույթ Միության անասան քննարկին: Միութիւնն ունէր երգչախումբ, պարախումբ, նկարիչների եւ գրողների բաժիններ: Միութեան հիմնադիրները եղել են Թեհրանում այդ ժամանակուայ Հայաստանի բարեկամ համարուող մտաւորականներն ու արուեստագետները:

Այս կապակցութեամբ նշեմ՝ որ ես մանկութիւն չեմ ունեցել, ոչ էլ՝ ուրիշ երեխաների պէս՝ խաղալու ժամանակ: Փոքր տարիքից աշխատել եմ կարիքի հարկադրանքով. սակայն ինչ որ արել եմ՝ արել եմ սիրով: Մշակույթ Միութիւնը ինձ համար եղել է միակ հաճույքի վայրը:

Ինչպէս ասեցի, ունէինք երգչախումբ, որը ղեկավարում էր Յովիկ Գասպարեանը, իսկ պարախումբը՝ Աւետիս Զամբազեանը, իմ մանկութեան եւ պատանեկութեան ընկերը: Նրա խմբում պարում էի նաեւ ես: Ինչպէս դիտել տուի, այդ տարիներին Թեհրանում ապրում էին կարեւոր թուով գաղթական արուեստագետներ, որոնց բացարձակ մեծամասնութիւնը բարեկամական կեցուածք ունէր խորհրդային Միութեան եւ Սովետական Հայաստանի հանդէպ: Այդ արուեստագետները նույնպէս մասնակցում էին Մշակույթ Միութեան աշխատանքներին:

Յիշում եմ, այդ թուականներին, երբ Հայաստանի ճանապարհորդութիւնը լսում էինք «Երեւանն է խօսում» բառերը, ամբողջ մարմնով փշաքաղում էինք: Մենք ռադիոյ չունէինք. ամենակարեւորը՝ ելեկտրականութիւն էլ չունէինք...: Ռադիոյ ունեցող ընկերներս պատմում էին իրենց լսած հաղորդումների մասին, բայց նրանց պատմածը ինձ չէր բաւարարում: Այդ օրերին, մի տեսակ ռուսական ռադիոյ էին բերել Պարսկաստան, որը նաեւ ճարտի Զեմբովինսկի էր աշխատում: Դա էլ գնելու ի վիճակի չէի, քանի որ շատ թանկ էր: Ուստի որոշեցի ինքս ինձ համար ռադիոյ սարքել: Թեհրանի հարաւում կային կարի էլ եւ արճիճի հանգեր, որտեղ կարելի էր գտնել ռադիոյ սարքելու յատկութիւն ունեցող գալէն կոչուած քարը, որի օգնութեամբ ինձ յաջողեց սարքել իմ սեպհական ռադիոն եւ ամէն առաւօտ «Երեւանն է խօսում» քաղցր բառերը լսել...:

Մշակույթ Միութեան չհամակրողները համախմբուած էին մի մարզական միութեան շուրջ, որը բաւական ուժեղ գործունէութիւն ունէր իր բնագաւառում: Կարելի է ասել՝ որ մտաւորականներն ու արուեստագետները համախմբուել էին Մշակույթ Միութեան շուրջ, իսկ մկանաւորները՝ մարզական միութեան...:

Ա.Կ. Ճիշտ է որ Մշակույթ Միութեան եւ Պարսկաստանի խաղողութեան Երիտասարդական Կոմիտէի անունից մասնակցել ես Ռուսիանուցում կայացած խաղողութեան միջազգային ֆեստիվալին,



որից յետոյ՝ գնացել ես նաեւ Խորհրդային Միութիւն:

Է.Ա. 1953-ին, չիտուհ հոգինոց պատուիրակութեամբ մասնակցեցինք ֆեստիվալին, որին մասնակցեցում էին նաեւ բազմաթիւ համաշխարհային համբաւ ունեցող անձնաւորութիւններ, որոնց կարգին՝ Փիկասոն, որը համագումարում ելույթ ունեցողներից մէկն էր: Պարսկաստանի պատուիրակութեան մէջ կային հինգ հայեր:

Ա.Կ. Գաղտնիք չէ որ 50-ական թուականներին Իրանը խիստ հակասովետ քաղաքականութիւն էր վարում: Ֆեստիվալին մասնակցելը քեզ համար որեւէ բացասական հետեւանք ունեցաւ:

Է.Ա. Հաշուի առնելով Իրանի հակասովետ քաղաքականութիւնը, Մոսկվայում մեզ առաջարկեցին մնալ Սովետ Միութիւնում: Խոստացան մեզ համար ուսման ու աշխատանքի բոլոր պայմանները ստեղծել: Բայց մենք նախընտրեցինք վերադառնալ մեր ընտանիքներին, ուստի՝ Բաքուից նաևով գնացինք Պարսկաստան: Երբ հասանք Փահլէվի, առաջուայ եւ ներկայ էնգելի նաւահանգիստը, մեզ ձերբակալեցին ու տարան Թեհրանի բանտը: Պարզուեց որ Իրանի գաղտնի սպասարկութիւնը լրտեսներ էր դրել մեր խմբի մէջ, որոնց ներկայացրած տեղեկագրի հիման վրայ ոմանց պահեցին բանտում, իսկ միւսներին՝ ազատ արձակեցին: Ես ազատ արձակուածների մէջ էի:

Ա.Կ. Ո՞ր տարին գնացիր Իտալիա:

Է.Ա. 1964-ին գնացի Իտալիա եւ 1966ին Հոռմի Արուեստների Ակադեմիայից վկայական ստանալով՝ վերադարձայ Պարսկաստան:

Ա.Կ. Իսկ ո՞վ էր հովանաւորում քո ուսումը:

Է.Ա. Ինչպէս ասեցի, իմ շահած փողի մեծ մասը տալիս էի մօրս, որը դրանից որոշ գումար խնայում էր իմ համալսարանական ուսման համար: Ահա այդ փողով գնացի Իտալիա, որից յետոյ նաեւ Անգլիա:

Ա.Կ. Այդ ժամանակ ամուսնացել էիր:

Է.Ա. Այո:

Ա.Կ. Գիտեմ որ բոլոր գեղանկարիչները, որոնց կարգին նաեւ դու, «գեղեցկութեան որսորդներ» էք... Ինչպէ՞ս եւ ե՞րբ «որսացիր» քո կեանքի ընկերուհուն, գեղեցիկ թելմային...:

Է.Ա. Գեղանկարիչների մասին ասածներդ լրիւ համաձայն եմ...: Ինչ վերաբերում է թելմային նրան ինձ ծանօթացրին Մշակույթ Միութեան պարախումբի աղջիկները: Ամուսնացանք 1962-ին, իսկ 1963-ին եւ 1968-ին բախտաւորուեցինք երկու մանչ զաւակներով:

Ա.Կ. Հիմա, մի քիչ խօսենք

նկարչական արուեստի մասին. յաջող նկարիչ լինելու համար տաղանդ բաւակա՞ն է:

Է.Ա. Տաղանդը նախապայման է, բայց դրան գուրահեղձ՝ ամէն նկարիչ պէտք է մշակի նաեւ այդ տաղանդը ճիշտ դրսեւորելու կարելիութիւնները: Օրինակ, նա ամենից առաջ պէտք է սովորի գծագրել: Հիմա ասում են, եթէ չես կարող գծագրել, ոչինչ, միայն նկարիր, ինչ որ նկարում ես, դա քո գեղարվեստն է...: Դա իմ կարծիքով, սխալ մտոնցում է: Ինչէն գրողի համար հարկաւոր է լեզուին քաջատեղեակ լինել, այնպէս էլ նկարչին պարտադիր է տիրապետել իր արուեստը արտայայտելու արհեստավարժական բոլոր միջոցներին: Արուեստագէտը նախ պէտք է իմանայ թէ՛ նկարչութիւնն ի՞նչ է: Նկարչութիւնը չի կարող բանաստեղծութիւն լինել, չի կարող երաժշտութիւն լինել, չի կարող լուրեր հաղորդելու միջոց լինել եւ ռադիոյի դեր կատարել: Նկարչութիւնը կարող է միայն նկարչութիւն լինել եւ որպէս այդպիսին՝ գնահատուել:

Ա.Կ. Քո արուեստը տարիների ընթացքում փոփոխութիւնների ենթարկուե՞լ է:



Է.Ա. Ինչպէս ուրիշների՝ այնպէս էլ իմ արուեստը ենթարկուել է փոփոխութիւնների: Ես այլեւս այն երիտասարդը չեմ, որը բաւարարում էր լուսանկարչական ճշգրտութեամբ վերարտադրել բնութիւնը...: Ինչպէս որեւէ արուեստագէտ՝ նկարիչն էլ տարիների ընթացքում հասունանում, գտուելով գուլարանում է եւ դառնում՝ աւելի թափանցիկ: Անձնական, քաղաքական, տնտեսական, ընկերային եւ այլ ազդակներ, նկարչական նոր ուղղութիւններ իրենց ազդեցութիւնն են թողնում արուեստագէտի վրայ: Օրինակ՝ ռուս հանձարեղ աւանդակարգ (avant-gard) նկարիչները մեծ ազդեցութիւն ունեցան ժամանակակից միւս նկարիչների վրայ, որի համար շատ բան ենք պարտական նրանց:

Միջանկեալ ասեմ, որ այդ տարիներին պարսկական պետութիւնը արուեստներով չէր հետաքրքրում: Այն ժամանակ Թեհրանում կար Սովետական Միութեան Արտասահմանեան Երկրների հետ Բարեկամութեան եւ Մշակութային Կապի Կոմիտէն, ԱՕՔՍՐ, որը խանութի նման մի փոքրիկ սենեակ ունէր, ուր կային ամսաթերթեր, որոնց մէջ կարելի էր գտնել մշակութային իրադարձութիւնների, մանաւանդ՝ նկարչութեան եւ նկարիչների մասին տեղեկութիւններ, ինչպէս Իլիա Ռէպինի (Ilya Repin 1844-1930), Վասիլի Սուրիկովի (Vasily Surikov 1848-1916), Վասիլի Քանդինսկու (Vassily Kandinsky 1866-1944) եւ

ուրիշների: Յատկապէս Քանդինսկին՝ նկարչական արուեստի մասին ունէր իր սեպհական տեսակետները, որոնք բնութագրում էր գեղեցիկ ընդհանրացումներով: Արուեստի նկատմամբ նրա ունեցած հայացքները, հիմնականում համապատասխանում էին նաեւ՝ նկարչութեան հանդէպ ունեցած իմ ըմբռնումներին:

Նշեմ այդ ընդհանրացումներից մի քանիսին.

«Գոյնը հոգու վրայ ամիջական ազդեցութիւն բանեցնելու միջոց է»:

«Նկարիչը ոչ միայն իր տեսողութիւնը՝ այլ նաեւ իր հոգին պէտք է գարգացնի»:

«Արուեստի մէջ պէտք է գոյութիւն չունի, քանի որ արուեստը կաշկանդում չի ճանաչում»:

Հարկ եմ համարում, երախտագիտութեամբ նշել այն պարագան որ այդ տարիներին, Պարսկաստան հաստատուած իմ գաղթական նկարիչ ընկերները ինձ ճիշդ ուղղութիւն ցոյց տուին: Մինչեւ այսօր չիշում եմ նրանց թելադրութիւններից կարեւորագոյնը.

«Եթէ ուզում ես լաւ նկարիչ դառնալ, ասում էին, ամենից առաջ

պէտք է սովորես գծագրել: Առանց գծագրել իմանալու, առանց արագօրէն մտքերդ թղթին յանձնելու փորձառութեան, դժուար թէ՛ յաջող նկարիչ դառնաս»:

Հետեւելով նրանց խորհրդին, միշտ հետս ունեցել եմ թուղթ եւ մատիտ, մի բան՝ որը շատ է օգնել ինձ, նկարչական իմ արուեստի գարգացման ճանապարհին:

Ա.Կ. Ես դրա կենդանի վկան եմ: Լոնդոնում, 1977 թ.ին, երբ Արամ Խաչատուրեանի նկարի նախապատրաստական աշխատանքներն էր անում, չիշում եմ, համերգասրահի տարբեր անկիւններից մատիտով գծագրում էիր վարպետին, Լոնդոն Սիմֆոնիկ Նուագախումբը ղեկավարելիս: Այդ նկարի հետ կապուած կայ մի դէպք, որը ներառնուած է Ա. Խաչատուրեանի մասին գրած իմ յուշերում, որոնք լուս են տեսել Ալբերտ Փարսադանեանի «Յարատեւող Բարեկամութիւն» գրքում: Այդ պատմութիւնը կը հրատարակուի այս հարցազրույցի վերջում, որպէս ՅԱԻԵԼՈՒԱՅ:

Ա.Կ. Մշակույթ Միութիւնը քեզ համար անհատական ցուցահանդէս կազմակերպե՞լ է:

Է.Ա. Ոչ: Առաջին անգամ 1949-ին, Մշակույթ Միութեան հաւաքակցի ցուցահանդէսին մասնակցեցի նաեւ ես: Ցուցահանդէսի կազմակերպիչներն էին Բանաստեղծ-նկարիչ Դեւը, նկարիչներ՝ Աբրահամ Գուրգէնեանն ու Միշա

Հարցազրույց Գոյների ճարտարապետ՝ Գեղանկարիչ Էդման Այվազեանի հետ

Շարունակուած էջ 12-էն

Շահագրգեանը: Այդ ցուցահանդէսը մեծ խանդավառութիւն առաջացրեց թէհրանում, որին իբրեւ հետեւեանք՝ Պարսկաստանի մշակութային միութիւնները, ընկերութիւններն ու ակումբները սկսեցին հաւաքական ցուցահանդէսներ կազմակերպել, որոնց հրաւիրուած էին բոլոր նկարիչները: Սոսկին անգամ մասնակցում էր դրանց:

Ա.Կ. Քեզ հիմա մի պահ ուզում եմ տեղափոխել հեռու Ղրիմ, ուր, ինչպէս գիտես, ծնունդ է հանճարեղ հայ ծովանկարիչ, Յովհաննէս Այվազովսկին: Վանիկ Սանթրեանը իր «Առկայծող Պատկերներ Դանուբի Ափերին» գրքում ունի մի բաժին, որը խորագրուած է «Էդման Այվազեան. Նամակերտից մինչեւ Ղրիմ», ուր նա անդրադարձել է Յովհաննէս Այվազովսկու (1817-1900) Ծննդեան 150-ամեակին եւ նշել որ դու էլ ես մասնակցել այդ հանդիսութիւններին: Ո՞վ էր քեզ հրաւիրել Ղրիմ:

Է.Ա. Մի շարք սփիւռքահայ նկարիչների հետ Սփիւռքահայութեան հետ Մշակութային կապի կոմիտէն, Անգլիայից ինձ եւ խաչատուր Փիլիկեանին էլ էր հրաւիրել յիշեալ յոբելիական հանդիսութիւններին: Բայց նախքան դրանց անդրադառնալը, քանի յիշեցիր Սանթրեանի անունը, ուզում եմ մի քանի խօսքով ներկայացնել իմ վաղեմի բարեկամին, բոլորից սիրուած ու հարգուած մարդուն ու մտաւորականին, որը վերջերս քեզից իմացայ, անցեալ տարուայ մարտին, երկար հիւանդութիւնից յետոյ հեռացել է կեանքից: Արմենպրեսը վանիկին ներկայացրել է որպէս, զեղանկարիչ, արձակագիր, սրապարակագիր, Արմենպրես հայկական լրատուական գործակալութեան ամենակարգ մեջ աշխատակիցը: Նա «Հայաստանի վաստակաւոր ժողովրդի»-ն էր կոչուած ունէր եւ հեղինակ էր 36 գրքերի: Հանգիստ նրա յոգնած ոսկորներին:

Ա.Կ. Ես էլ եմ բախտը ունեցել ճանաչելու այդ մեծ մտաւորականին, հրաշալի հային ու լաւ մարդուն: Նրան ինձ ծանօթացրեց է անուանի կոմպոզիտոր Էդ. Միրզոյեանը, որի մասին Վանիկը «Էդ. Միրզոյեան, Խղճի եւ ճաշակի Ասպետը» խորագրով գիրք է հրատարակել 2013 թ.ին: Յոյս ունեմ ինքնագովութիւն էլ համարուի, եթէ յայտնեմ որ այդ գրքի 3-րդ էջում, հեղինակն իմ մասին գրել է, անշուշտ բաւական չափազանցուած բայց հաճելի հետեւեալ խօսքերը.

«Սոյն հրատարակութիւնը հեղինակը սիրով եւ շնորհակալութեամբ ընծայում է մեր հայրենակից, ազնիւ մտաւորական, գրական-հասարակական եռանդուն գործիչ, Ասատուր Կիւզելեանին (Լոնդոն)՝ հայրենասիրական մեծ նուիրումների համար»:


Ա.Կ. Ուրիշ ովքե՞ր էին եկել Ղրիմ:

Է.Ա. Հայաստանից մեծ թուով նկարիչներ էին մասնակցում հանդիսութիւններին, էդուարդ Իսաբեկեանի գլխաւորութեամբ: Հայ նկարիչներ եկել էին նաեւ աշխարհի տարբեր երկրներից՝ Ամերիկայից, Կանադայից, Ֆրանսիայից, Յունաստանից, Իրանից եւ այլն: Հայաստանցիներ թէեւ առանձին հիւրանոցում էին մնում, բայց ձեռնարկներին բոլորս միանում էինք:

Ա.Կ. Վանիկ Սանթրեանը Ղրի-

մում քո հետ հանդիպման մասին գրում է.

«Նկարչի հետ մեր հանդիպումը տեղի է ունեցել անցեալ տարի, Ղրիմում: Միայն մէկ հանդիպում, շփման մի քանի օրեր միայն, եւ ահա յիշողութեան մէջ վառ են անսպառ խանդավառութեան ու հիացմունքի պահերը



նրա՝ մարդու ու արուեստագետի հետ ունեցած շփումներից: Նա Ղրիմ է եկել Ռիշար Ժերանեանի (Ֆրանսիա), Պետրոս Ալախեանի (Յունաստան), Յարութիւն Միւսսեանի (Իրան) հետ մասնակցելու Յովհաննէս Այվազովսկուն նուիրուած սիմպոզիումին (symposium), նրանց եւ Երեւանից, Խորհրդային Միութեան ուրիշ քաղաքներից եկած հայ եւ այլազգի նկարիչների հետ մէկ ամիս աշխատել Եւրոպայում՝ Այվազովսկուն նուիրուած ցուցահանդէսին ներկայանալու Այվազովսկու՝ ապագայում կառուցուելիք թանգարանի ֆոնդի հիմնադրամը իր բաժինը բերելու համար:

...Ոչ բարձրահասակ, մշտաժպիտ, ըկերոջ, բարեկամի հանկաճ, միշտ ուշադիր ու հոգատար էդման Այվազեանը անմիջապէս սիրելի դարձաւ բոլորի համար: Ինչպիսի հոգատարութիւն էր նա ցուցաբերում իր աւագ ընկերոջ եւ ուսուցչի՝ Յարութիւն Միւսսեանի հանդէպ, որի հետ Եւրոպայում հիւրանոցի մի համարում էր մնում, որի հետ տարիներով աշխատել է, շնչել նոյն օդը, նոյն հացն ու ջուրը կիսել: Դուք տեսնէիք թէ ինչպէս էր նա կանգ առնում Այվազովսկու պատկերասրահի ստեղծագործութիւններից իւրաքանչիւրի առջեւ. այդպէս հայկերէնէն էր առնում իր շքարի ու եկեղեցու խորանի առջեւ, այդպէս երազած նա ունկնդրում էր կոմիտաս ու Եկմալեան»:

Մեկնելուց առաջ, Այվազեանն ասեց.

«Ափսոս, որ Երեւան չեմ կարող գալ: Փոքր ինչ խաղաղութի, ցուցահանդէսով կը գամ: Հայաստանն էլ կը նկարեմ՝ ցուցադրելու համար: Մեր հայ նկարիչներին շատ սիրեցի՝ Ժերանեանին, Պետրոսին, Աշոտ Մելքոնեանին, Ստեփան Անդրանիկեանին: Յարութիւնի եւ Իսաբեկեանի գլխաւորութեամբ աչտեղ մի տան զաւակների պէս աշխատեցինք»:

Ա.Կ. Ղրիմից հիմա տեղափոխուենք Պարսկաստանի Փերիա գաւառի Նամակերտ հայկական գիւղը, որը՞ տարիներ առաջ, իր բնակիչներով անմահացրել ես կախարդական քո վրձինով: Ահա թէ ի՞նչ է ասում այդ մասին Վանիկ

Սանթրեանը իր գրքում.

«Նամակերտ գիւղ՝ Իսպահան նահանգի Փերիա գաւառում: Հիմնել են մի քանի հարիւր տարի առաջ Հայաստանից բռնագաղթուած հայերը, իրենց կով ու ոչխարը պահել, իրենց հողն ու վարն արել, սերնդէ սերունդ մնացել անփոփոխ, մնացել հայավարի՝ գուլալ

ու ազնիւ: Էդմանի գեղանկարներում գիւղի՝ միմիանց վրայ թիկնած հողէ տնակներն են ու ծուռտիկ, ցեխոտ փողոցներ, «հորովի» ասող հողագործը, աղբիւր՝ ջրի գնացող կիրն ու թոռանը գրկած մեծ մայրիկը, ջահել հարսը՝ իր երկու զաւակներով ու դռան մօտ գրոցի բռնուած այրերը, աղքատիկ բակերն ու հարսանեաց թափօրը, գիւղական սալն ու իլիկ պտտոցնող կիրն»:

Ա.Կ. Ի՞նչը ստիպեց քեզ, էդիկ, գնալ ու նկարել Փերիա նահանգի մի անշուք անկիւնում «վեր ընկած» ինչպէս ջուղայեցի պիտի ասէր, գիւղն ու նրա բնակիչներին: **Է.Ա.** Նամակերտի հետ կապուած պատմութիւնը շատ երկար է, բայց կ'աշխատեմ ամփոփ կերպով պատմել այդ մասին: Ինչպէս նշեցի, հազիւ ինը տարեկան էի, երբ Մանուկ Մարտինի հովանաւորութեամբ սկսեցի սովորել Իսպահանի գիշերօթիկ դպրոցում: Ահա այդ ժամանակ էր, որ շուկայում յաճախ տեսնում էի մի խումբ գիւղացիների, որոնք Իսպահան էին գալիս իրենց իւղն ու պանիրը վաճառելու եւ հարկ եղած գնումներն անելով՝ գիւղ վերադառնալու: Նրանք տարբեր հայերէն էին խօսում. նրանց իւրաքանչիւր կերպարը, վարուելակերպը, հագուելը, կանանց գունա-

գեղ շորերը, ո՛չ մի ուրիշ տեղ չէի տեսել: Նրանք Նամակերտ հայկական գիւղի բնակիչներ էին, որոնք փոքր տարիքից իմ վրայ թողեցին անմոռանալի տպաւորութիւն:

Տարիներ անց, երբ արդէն ճանաչուած նկարիչ էի, մի քանի ընկերներով որոշեցինք գնալ Նամակերտ, գիւղն ու բնակիչներին նկարել: Ճանապարհը մինչեւ Իսպահան դժուար՝ բայց տանելի էր: Իսպահանից Նամակերտ՝ ուղղակի չարչարանք էր: Վերջին մի քանի մղոն ճամբան էլ քայլելով գնացինք:

Ա.Կ. Նամակերտի քո նկարների մասին հիացմունքով են խօսում բոլորը, նկարչութիւն սիրողներից սկսած՝ մինչեւ ամենախտապահանջ քննադատները: Իմ տրամադրութեան տակ կայ Նամակերտի նկարներին նուիրուած «ՀԱՅ-ԿԱԿԱՆ ՄԻ ԳԻՒՂԻ Նկարներ եւ Գծանկարներ» («Paintings and Drawings of AN ARMENIAN VILLAGE») խորագրուած մի ալբոմ, որը հրատարակուել է 1984-ին: Ալբոմի յառաջաբանը գրել է Լոնդոնի արուեստի հեղինակաւոր քննադատների Ջորջ Սորլի Ուիթթը (George Sorley Whittet), որը որոշ ժամանակ վարել է «The Studio» եւ «Studio International» թերթերի խմբագրութիւնը, ինչպէս նաեւ՝ հրատարակել արուեստի վերաբերեալ հարիւրաւոր յօդուածներ աշխարհի տարբեր պարբերականներում: Նրա գործերից յիշենք՝ «Լոնտոն-Աշխարհի Արուեստի Կենդրոն» (London: Art Centre of the World) եւ «Արուեստի Սիրահարներ» (Lovers in Art) գրքերը:

Ջորջ Սորլի Ուիթթը Նամակերտի քո նկարների մասին գրում է.

«Այս գրքի մէջ իր նկարչական կախարհիչ ձիրքերով եւ ընտանեկան ջերմ զգացմունքով, էդման Այվազեանը ստեղծել է հայրենատենչ պատկերների մի հաւաքածո՝ տեղահանուած հայկական մի գաղութի, որոնց նախնիները աւելի քան երեք հարիւր տարի ապրել են իրենց աւանդոյթներով շանկախ իրենց շրջապատի բնակիչներից եւ գիւղի պատերից դուրս լայն աշխարհում տեղի ունեցած սովորութիւններից: Նրա նկարները պատկերում են գունազեղ հարուստ զգեստներ, հարուստ աւանդոյթներ եւ մարդկային փոխյարաբերութեան ջերմ մթնոլորտ, որը շատ ժամանակակից համայնքներում դժբախտաբար պակասում է»:

(Շարունակելի-2)

ՄԴՎԿ-ի
Խորհրդատուական Գրասենեակ
(888) 908-1887
contactus@aebu.org

COVID-19
HOTLINE

ՄԴՎԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի Գլխաւորութեամբ ու համագործակցութեամբ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) եւ Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) կը յայտարարէ որ «քորոնա» ժահրի ստեղծած տագնապալի վիճակին բերումով կեանքի կոչած ենք յատուկ գրասենեակ մը:

Սոյն գրասենեակը խորհրդատուական ծառայութիւններ պիտի տրամադրէ պետական եւ այլ նպաստներէն օգտուելու կարելիութիւններուն մասին, որպէսզի Հայ քաղաքացիները կարողանան որոշ չափով յաղթահարել տնտեսական դժուարութիւնները:

Խորհրդատուութեան եւ օժանդակութեան համար կարելի է դիմել
հեռաձայնելով հետեւեալ թիւին. 888-908-1887
Կամ. contactus@aebu.org

Տեսերիզ - Յճճճճճ թիւմ Ադո ԵՄ. Բարբառ Եւ Բարբեր



Առողջութիւն եւ համբերութիւն կը մաղթենք մեր ընթերցողներուն համաշխարհային տագնապի այս արտասովոր օրերուն:

Եթէ այլ ժամանակներու մէջ փոխադրուելի կը փափաքիք եւ մոռնալ քիչ մը յայտնաւորականութիւնը, մեր պատրաստած նոր ֆիլմը հաւանաբար կը ծառայէ ձեր այս նպատակին:

Վերնագիրն է՝ «Հէճճճ թիւմ ադո ԵՄ. բարբառ եւ բարբեր»: Յղացք եւ խմբագրում՝ Միլիանա Տէր Մկրտիչեան

Տեսերիզին հրատարակութիւնը նախատեսուած էր երկու շաբաթ առաջ: Բայց մեր խումբն ալ համաճարակին եւ անոր ստեղծած տագնապին հետեւանքները կրեց: Միլիանա Տէր Մկրտիչեանը մեկնած էր Պուէնոս Այրէս հարազատներուն այցելութեան, բայց դէպի Պերլին վերադարձի թռիչքը ջնջուեցաւ եւ միայն շաբաթ մը առաջ յաջողեցաւ վերադառնալ տուն եւ միանալ ընտանիքին:

Ան անմիջապէս վերսկսաւ աշխատիլ տեսերիզին վրայ եւ անոր պատրաստութիւնը իր աւարտին հասցնել:

Մօտաւորապէս 11 վայրկեան տեւող ֆիլմ մըն է, որ յատկացուած է Հաճճճի բարբառին եւ հաճճճիներու գանազան սովորութիւններուն: Անիկա բազում հետազոտութիւններու արդիւնքն է եւ աշխարհի տարածքին տարտղնուած նիւթերու՞ մէկտեղում մը: Հոս կ'«տեսնուին» մարդիկ, որոնք կ'«ապրին Լիբանան կամ Արժանիքի»: Կը տեսնենք լուսանկարներ, որոնք մեզի դրկուած են Լիբանանէն, Միացեալ Նահանգներէն, Արժանիքին կամ Ֆրանսայէն: Կ'ունկնդրենք երաժշտութիւն, որ մեզի հասած է Նիւ Ճըրսիէն, Պուէնոս Այրէսէն կամ Պերլինէն:

Բոլորին հասարակաց յայտարարը Հաճճճն է, Հաճճճի բարբառը կամ Հաճճճի աւանդութիւններն ու տեղական մշակոյթը:

Առաջին քան 20 հազար հայութիւն հաշուող քաղաք մըն էր Հաճճճը՝ պատմական Կիլիկիոյ հիւսիսը գտնուող այս վայրը: 1920-ին, անիկա ամբողջութեամբ կը պարպուի իր հայ բնակիչներէն:

Անոնցմէ շատեր 1921-ի վերջերուն ապաստան կը գտնեն Լիբանանի մէջ:

Բազմահազար այլ հայերուն մօտ, հաճճճիները նոյնպէս կը հաստատուին Պէյրութի գաղթականական քէմփին մէջ: Ուրիշներ իրենց ճամբան կը շարունակեն աւելի հեռու վայրեր, ինչպէս Յունաստան, Արժանիքի, Միացեալ Նահանգներ կամ Խորհրդային Հաստատութիւն:

Լիբանանի մէջ 1930-էն սկսեալ հաճճճիները կը կառուցեն Պէյրութի ծայրամասին: Նոր Հաճճճ թաղամասը: Անիկա շուտով կը դառնայ հաճճճիներու բնակեցման վայրը:

Այս համախումբ ապրելակերպը առիթ տուած է որ կարգ մը հաճճճիական սովորութիւններ եւ տեղական բարբառը՝ հէճճ լիզուն, պահպանուին գաղթականութեան պայմաններուն մէջ, յատկապէս Պէյրութ եւ Պուէնոս Այրէս:

Տեսերիզին կապը՝ <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/adanavilayet/hadjin/localcharacteristics/languageanddialect.html>

Յուշամատենան Ծրագիր

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

Լուսին ձերէճեանի (ծնեալ՝ Գալայճեան) մահուան տխուր առիթով (Լիբանան), Ս.Գ.Զ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Շրջանի Վարիչ Մարմինը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն, յատկապէս գաւկիցի Տէր եւ Տիկին ընկ. Տոքթ Եղիկ եւ Հուրի ձերէճեաններուն եւ Փաթափութեան ընտանիքին:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

Լուսին ձերէճեանի (ծնեալ՝ Գալայճեան) մահուան տխուր առիթով (մահացած Պէյրութ), «Մասիս» շաբաթաթերթը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար իր գաւկիցի Տոքթ Եղիկ եւ Հուրի ձերէճեանին:

Ֆրանք Փալոն Կոչ Կ'ուղղէ

Շարունակուած էջ 1-էն
«Միացեալ Նահանգներ պէտք է անյապաղ դադարեցնէ ռազմական օգնութիւնը Ատրպէյճանին այնքան ժամանակ, մինչեւ այդ երկրի կառավարութիւնը դադարեցնէ իր յարձակումները Հայաստանի եւ Արցախի դէմ, համաձայնի տարածաշրջանային հակամարտութիւններու խաղաղ լուծման եւ ապացուցէ, որ դադարեցուցած է մարդու իրաւունքներու ոտնահարումը», -

Չմոռցուող - Կենդանի

Շարունակուած էջ 6-էն
լով նշանակալից նպաստ ու բազմատեսակ աւանդ, գնահատուելով հայրենի թէ սփիւռքահայ գրական-մտաւորական անուանի ու պատասխանատու կողմերէն:
Զմոռնանք, որ ան «Շիրակ» ու «Կամար» գրական թերթերու խմբագրական կազմերու խորհրդատու անդամ էր, իսկ «Արարատ» - մշակութային ու գրական բաժնի պատասխանատու խմբագիր, իր խոր դրոշմը ձգելով անոնց բովանդակութեան ճոխութեան ու շահեկանութեան վրայ:
Հոս կարելի է արձանագրել Խորհրդային շրջանի Սփիւռքի Կոմիտէին տարած ու գլխաւորած այն ազգանպաստ, շնորհաշատ ու գրականաչէն գործունէութիւնը, երբ ան կը դառնար «ուկեայ կամուրջ», ոչ միայն Հայաստանը կապելով

Սփիւռքի եւ՝ հակառակը, այլեւ՝ Սփիւռքը՝ Սփիւռքին, ուր կը համախմբուէին՝ գրողներ, կրթական ու մշակութային գործիչներ եւ ընդհանրապէս մտաւորականներ:

Պէպօն այդ հանդիպումներուն կը հանդիսանար գլխաւոր դէմքերէն ու խօսնակներէն մէկը, կ'ապրէր անսահման ուրախութիւն ու խանդավառութիւն, հաւատալով որ ատիկա, որպէս կենդանի օղակ հայ մտաւորականին կու տայ վերանորոգուելու ու վերապրելու յոյս ու կամք:

Պեպոյին չիշատակն ու ժառանգը վառ են, իրենց յատկանշելի, ուսանելի եւ անկորնչելի երանգներով, իսկ անոր անցումն եւ տարելիցը պարզապէս յաւելեալ առիթ են՝ վկայագրելու անոր տեղին ու դերին արժանիքները: (Պէյրութ, 27 Մարտ 2020)

Արդիական Բռնակալը

Շարունակուած էջ 11-էն
իրենց գաւակներուն հետ ըլլալու. այժմ պէտք եղածէն աւելի ունին. թող լաւագոյնս օգտագործեն: Կանուխ արթննալու պատիժէն զերծ են հիմա:
Ընկերութիւն մը, որուն գլխաւոր մտասեւեռումն է մսխումը, ցուցամոլութիւնը, վայելքը, անհանդուրժողականութիւնը, մանաւանդ «ես»ի պաշտամունքը եւ ամէն օր գործող բարոյական սայթաքումները եւ ազատութեան կեղծ պիտակին տակ գանոնք արդարացնող ու դրուատող խումբերը անցած են այլեւս օրինաչափութեան ներքի սահմանները:
Բայց այսքանով չի վերջանար: Երկրորդ հանգրուանը աւելի ծանր է: Այս պարտադիր «ծուլութիւն» ձրի չէ. անխուսափելիօրէն պիտի յաջորդէ տնտեսական ծանր

տագնապ մը, որ ան եւս համաշխարհային պիտի ըլլայ: Նախագահը քանիցս շէշտեց, որ պատրաստ գտնուինք պալիք դժուար օրերուն:

Արդեօք ստիկա մեզ զգաստութեան հրաւիրող պատիժ մը չէ՞:

Նախքան այս յօդուածին վերջակէտ դնելս, պարտք կը զգամ երախտագիտութեան տուրքս վճարելու բոլոր բժիշկներուն, հիւանդապահներուն եւ առողջապահութեան մարզին մէջ ծառայողներուն, ինչպէս նաեւ երկրի ապահովութեան ուժերուն, քաղաքի մաքրութեան պատասխանատուներուն եւ բոլոր անոնց, որոնք յաճախ ենթարկուելով վարակումի, նոյնիսկ մահուան վտանգին, ամէն օր սիրայօժար, երկար ժամեր կը յատկացնեն մարդոց անհրաժեշտ խնամքը եւ պէտքերը հոգալու համար:
Յարգանք իրենց:
(Արժանիքին)

Սերժ Սարգսեանն Անակնկալի կը Բեր՞ի

Շարունակուած էջ 2-էն
Թաց էր, որը հասունացել է թէ Հայաստանի շուրջ, թէ Հայաստանի ներքին կեանքում տեղի ունեցող տեւական գործընթացների ուղեկցութեամբ: Հնարաւոր է ամբողջութեամբ ու լիարժէք քննել ապրիլեան քառօրեայ պատերազմի հանգամանքները, կենսորոնանալով լոկ դրանց ռազմական բաղադրիչի վրայ, այն դէպքում, երբ մեծ հաշուով ռազմականում արտայայտուել է ընդամէնը ամենատարբեր դերակատարներով ներքին ու արտաքին քաղաքական բաղադրիչների մի քանի տարուայ հանրագումար-հետեւանքը:
Սերժ Սարգսեանն իր կարգավիճակի բերումով եղել է այդ

ամէնի բաց թիրախը, միաժամանակ օբյեկտիւ ու սուբեկտիւ գործօնների բերումով գրկուած լինելով նոյնքան բաց թիրախաւորել այլ շրջանակների, որոնք ունեն Հայաստանի ու Արցախի շուրջ ազդեալիչ հասունացման պատասխանատուութեան ահուկի բաժին: Սարգսեանն այժմ էլ ի հարկէ այդ հարցում ուղղակիօրէն կաշկանդուած է մի շարք առումներով ու պատճառներով: Կարո՞ղ է նա ստեղծել իրավիճակ, երբ նոր թիրախներ բարձրաձայնելու անհրաժեշտութեան առաջ կը կանգնի Սարգսեանին հրաւիրած յանձնաժողովը, որոշելով՝ հանրայնացնել Սարգսեանի պատասխաններից ստացուած տեղեկատուութիւնը, թէ ոչ: «ԼՐԱԳԻՐ»



ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ՊԱՐԸ Է ԵՒ 9 ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐՑԱԽՈՅԸ

ՀԱՍԱՅՆՔՆԵՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ
 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ
 ԱՄԷՆ ԱՆՁ ԿԱՐԵՒՈՐ Է ԱՅՍՈՐ



CaliforniaCensus.org